# Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2015 թվականի երկրորդ եռամսյակում

**(վերլուծություն)**

2015 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 47239 գործարք, որոնց քանակը 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 30.1 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 14.6 %-ով:

2015 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2015 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2015 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 12364 օտարման գործարքի 75.9 %-ը կազմել է առուվաճառքը, 23.6 %-ը՝ նվիրատվությունը և 0.5 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 35.1 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված

անշարժ գույքի 34.0 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2015 թվականի երկրորդ եռամսյակում, 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 20.7 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 8.3 %-ով:

2015 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 63.7 %-ն արձանագրվել է բազմաբակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2015 թվականի երկրորդ եռամսյակում, 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 33.4 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 19.6 %-ով:

2015 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | Երկրորդ եռամսյակ 2014 թ. | Երկրորդ եռամսյակ 2015 թ. | Առաջին եռամսյակ 2015 թ. |
| Կենտրոն | 428000 | 428000 | 428000 |
| Արաբկիր | 356600 | 356600 | 356600 |
| Քանաքեռ-Զեյթուն | 282700 | 282700 | 282600 |
| Նոր Նորք | 252500 | 253200 | 253000 |
| Ավան | 260200 | 260700 | 260400 |
| Էրեբունի | 250800 | 252000 | 251600 |
| Շենգավիթ | 256100 | 257100 | 256900 |
| Դավթաշեն | 275150 | 275800 | 275500 |
| Աջափնյակ | 249600 | 250100 | 249650 |
| Մալաթիա-Սեբաստիա | 242000 | 243200 | 242800 |
| Նուբարաշեն | 155600 | 156800 | 156500 |
| **Միջինը Երևանում (բացի Նորք-Մարաշից)** | ***273600*** | ***274200*** | ***274000*** |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2015 թվականի երկրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները՝ 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով, 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել են 0.1 %-ով:

2015 թվականի երկրորդ եռամսյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 1005 բնակարան, որի քանակը, 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ, աճել է 16.7 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 9.5 %-ով:

2015 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի

բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով.

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | Երկրորդ եռամսյակ 2014 թ. | Երկրորդ եռամսյակ 2015 թ. | Առաջին եռամսյակ 2015 թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 115900 | 116000 | 116000 |
| | Ապարան | 57450 | 57700 | 57550 |
| | Թալին | 65850 | 66000 | 65900 |
| Արարատ | Արտաշատ | 96300 | 97900 | 97500 |
| | Մասիս | 115400 | 115800 | 115800 |
| | Վեդի | 100600 | 101200 | 100950 |
| | Արարատ | 75400 | 76400 | 75800 |
| Արմավիր | Վաղարշապատ | 154150 | 154100 | 154100 |
| | Արմավիր | 121200 | 121200 | 121200 |
| | Մեծամոր | 87500 | 87500 | 87500 |
| Գեղարքունիք | Սևան | 99200 | 99200 | 99200 |
| | Գավառ | 59800 | 60100 | 60000 |
| | Մարտունի | 107650 | 107700 | 107700 |
| | Վարդենիս | 44800 | 44850 | 44800 |
| | Ճամբարակ | 28700 | 28700 | 28700 |
| Լոռի | Վանաձոր | 88400 | 88500 | 88500 |
| | Ստեփանավան | 74500 | 74600 | 74600 |
| | Սպիտակ | 99800 | 99800 | 99800 |
| | Ալավերդի | 55000 | 55200 | 55100 |
| | Տաշիր | 47300 | 47300 | 47300 |
| | Թումանյան | 11000 | 11000 | 11000 |
| | Շամլուղ | 8000 | 8000 | 8000 |
| | Ախթալա | 20200 | 20300 | 20300 |
| Կոտայք | Աբովյան | 155100 | 155100 | 155000 |
| | Նոր Հաճն | 128600 | 128550 | 128550 |
| | Բյուրեղավան | 108150 | 108200 | 108100 |
| | Եղվարդ | 109400 | 109400 | 109350 |
| | Հրազդան | 63800 | 63800 | 63800 |
| | Ծաղկաձոր | 292500 | 292400 | 292400 |
| | Չարենցավան | 85500 | 85500 | 85500 |
| Շիրակ | Գյումրի | 109300 | 109200 | 109200 |
| | Արթիկ | 66700 | 66800 | 66700 |
| | Մարալիկ | 40700 | 40750 | 40700 |
| Սյունիք | Գորիս | 122000 | 122950 | 122800 |
| | Կապան | 92500 | 94000 | 93450 |
| | Սիսիան | 91150 | 91950 | 91600 |
| | Մեղրի | 80900 | 81800 | 81300 |
| | Ագարակ | 46900 | 47300 | 47100 |
| | Քաջարան | 94650 | 94600 | 94600 |
| | Դաստակերտ | 8000 | 8000 | 8000 |
| Վայոց ձոր | Վայք | 95000 | 95000 | 94900 |
| | Եղեգնաձոր | 125500 | 125600 | 125500 |
| | Ջերմուկ | 112900 | 112950 | 112900 |
| Տավուշ | Դիլիջան | 113150 | 114000 | 113800 |
| | Իջևան | 118300 | 118350 | 118250 |
| | Բերդ | 60200 | 60200 | 60200 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Նոյեմբերյան | 49900 | 49900 | 49850 |
| | Այրում | 31850 | 31850 | 31850 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2015 թվականի երկրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել են 0.1 %-ով:

2015 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 1088 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 339 գործարք, մարզերում՝ 749 գործարք: 2015 թվականի երկրորդ եռամսյակում, 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 12.9 %-ով, ընդ որում, Երևանում՝ 27.9 %-ով, մարզերում՝ 7.2 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 18.4 %-ով, ընդ որում, Երևանում ՝ 7.1 %-ով, իսկ մարզերում՝ 22.6 %-ով:

2015 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ$^2$ և տնամերձի 400.0 մ$^2$ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ$^2$ մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | Երկրորդ եռամսյակ 2014 թ. | Երկրորդ եռամսյակ 2015 թ. | Առաջին եռամսյակ 2015 թ. |
| Կենտրոն | 476100 | 476100 | 476100 |
| Արաբկիր | 383000 | 383000 | 383000 |
| Քանաքեռ-Զեյթուն | 295000 | 295000 | 295000 |
| Նորք-Մարաշ | 319200 | 319200 | 319200 |
| Ավան | 270500 | 270500 | 270500 |
| Էրեբունի | 239700 | 239750 | 239750 |
| Շենգավիթ | 255000 | 255000 | 255000 |
| Դավթաշեն | 276000 | 276000 | 276000 |
| Աջափնյակ | 250050 | 250050 | 250050 |
| Մալաթիա-Սեբաստիա | 238000 | 238000 | 238000 |
| Նուբարաշեն | 150700 | 150800 | 150800 |
| Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից) | 286700 | 286700 | 286700 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2015 թվականի երկրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 մ$^2$ մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

2015 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ$^2$ և տնամերձի 1000.0 մ$^2$ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ

շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | Երկրորդ եռամսյակ 2014 թ. | Երկրորդ եռամսյակ 2015 թ. | Առաջին եռամսյակ 2015 թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 136200 | 136200 | 136200 |
| | Ապարան | 60050 | 60050 | 60050 |
| | Թալին | 69250 | 69250 | 69250 |
| Արարատ | Արտաշատ | 100000 | 100000 | 100000 |
| | Մասիս | 115100 | 115100 | 115100 |
| | Վեդի | 102300 | 102300 | 102300 |
| | Արարատ | 88000 | 88000 | 88000 |
| Արմավիր | Վաղարշապատ | 153100 | 153100 | 153100 |
| | Արմավիր | 107000 | 107000 | 107000 |
| Գեղարքունիք | Սևան | 94800 | 94800 | 94800 |
| | Գավառ | 57100 | 57100 | 57100 |
| | Մարտունի | 96100 | 96100 | 96100 |
| | Վարդենիս | 41000 | 41000 | 41000 |
| | Ճամբարակ | 31100 | 31100 | 31100 |
| Լոռի | Վանաձոր | 100000 | 100200 | 100000 |
| | Ստեփանավան | 90000 | 90300 | 90000 |
| | Սպիտակ | 114000 | 114000 | 114000 |
| | Ալավերդի | 50200 | 50200 | 50200 |
| | Տաշիր | 51900 | 51900 | 51900 |
| | Թումանյան | 12000 | 12000 | 12000 |
| | Շամլուղ | 14000 | 14000 | 14000 |
| | Ախթալա | 30000 | 30000 | 30000 |
| Կոտայք | Աբովյան | 157000 | 157000 | 157000 |
| | Նոր Հաճն | 129800 | 129800 | 129800 |
| | Բյուրեղավան | 120500 | 120500 | 120500 |
| | Եղվարդ | 116100 | 116100 | 116100 |
| | Հրազդան | 82600 | 82600 | 82600 |
| | Ծաղկաձոր | 305000 | 305000 | 305000 |
| | Չարենցավան | 83000 | 83000 | 83000 |
| Շիրակ | Գյումրի | 118500 | 118700 | 118500 |
| | Արթիկ | 63100 | 63100 | 63100 |
| | Մարալիկ | 52000 | 52000 | 52000 |
| Սյունիք | Գորիս | 130000 | 130000 | 130000 |
| | Կապան | 100000 | 100200 | 100000 |
| | Սիսիան | 96500 | 96500 | 96500 |
| | Մեղրի | 84500 | 84500 | 84500 |
| | Ագարակ | 46900 | 46900 | 46900 |
| | Դաստակերտ | 11610 | 11610 | 11610 |
| Վայոց ձոր | Վայք | 90050 | 90050 | 90050 |
| | Եղեգնաձոր | 116600 | 116600 | 116600 |
| | Ջերմուկ | 131300 | 131300 | 131300 |
| Տավուշ | Դիլիջան | 113000 | 113700 | 113000 |
| | Իջևան | 123200 | 123200 | 123200 |
| | Բերդ | 60100 | 60100 | 60100 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Նոյեմբերյան | 48300 | 48300 | 48300 |
| | Այրում | 36250 | 36250 | 36250 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ$^2$ մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել է 5083 միավոր (2601.23 հա) հող, որից Երևանում՝ 329 միավոր (26.31 հա): Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 3190 միավոր (2412.38 հա), որից Երևանում՝ 18 միավոր (2.09 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 1247 միավոր (113.78 հա), որից Երևանում՝ 172 միավոր (11.65 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 430 միավոր (30.57 հա), որից Երևանում՝ 131 միավոր (9.43 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 45 միավոր (17.56 հա), որից Երևանում՝ 8 միավոր (3.14 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 12 միավոր (13.64 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 157 միավոր (13.10 հա),
- ջրային հող՝ 2 միավոր (0.20 հա) ընդհանուր մակերեսով:

2015 թվականի երկրորդ եռամսյակում օտարված հողերից 4300 միավորի (2317.04 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 253 միավոր (17.41 հա), նվիրատվության գործարք՝ 741 միավոր (279.96 հա), որից Երևանում՝ 64 միավոր (8.54 հա) և փոխանակության գործարք՝ 42 միավոր (4.23 հա), որից Երևանում՝ 12 միավոր (0.36 հա):

Հանրապետությունում 2015 թվականի երկրորդ եռամսյակում 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակն աճել է 8.0 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակն աճել է 26.0 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 11.5 %-ով, իսկ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 32.8 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Լոռու մարզում՝ 630.68 հա, որից 625.19 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 20.0 %-ը կամ 862 միավորը (257.51 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 77 միավոր (3.42 հա), իսկ 79.1 %-ը կամ 3403 միավորը (2028.02 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 168 միավոր (13.97 հա): 2015 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 35 գործարք (31.51 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարք:

Ստորև ներկայացված է 2015 թվականի երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների,

հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

| | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող | | | | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյուղ. նշա-նակության հողեր | | Արդյունա-բերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Գյուղ. նշա-նակության հողեր | | Արդյունա-բերական օբյեկտնե-րի հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հո-ղեր | | հասարակական կառուցապատ. հողեր | | | | | | բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր | | հասարակական կառուցապատ. հողեր | |
| | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) |
| Երևան | 0 | 0.00 | 3 | 1.68 | 27 | 0.91 | 47 | 0.83 | 10 | 0.47 | 3 | 0.26 | 92 | 5.26 | 63 | 7.99 |
| Արագածոտն | 33 | 22.90 | 2 | 0.11 | 3 | 0.04 | 8 | 0.37 | 189 | 187.90 | 2 | 1.50 | 51 | 4.65 | 6 | 0.28 |
| Արարատ | 36 | 58.04 | 4 | 0.29 | 38 | 2.55 | 14 | 0.36 | 226 | 242.62 | 4 | 3.89 | 103 | 8.90 | 11 | 0.22 |
| Արմավիր | 9 | 8.42 | 1 | 0.03 | 2 | 0.04 | 10 | 0.35 | 266 | 403.69 | 2 | 0.24 | 139 | 13.19 | 7 | 0.45 |
| Գեղարքունիք | 19 | 5.18 | 1 | 0.10 | 35 | 2.71 | 15 | 2.11 | 107 | 83.46 | 2 | 0.02 | 38 | 4.66 | 6 | 0.16 |
| Լոռի | 7 | 1.55 | 0 | 0.00 | 15 | 0.26 | 34 | 3.36 | 1080 | 603.63 | 0 | 0.00 | 19 | 1.29 | 14 | 0.44 |
| Կոտայք | 60 | 56.41 | 4 | 2.13 | 89 | 5.33 | 37 | 1.97 | 264 | 171.72 | 1 | 0.52 | 210 | 17.81 | 24 | 4.63 |
| Շիրակ | 1 | 5.27 | 2 | 0.98 | 11 | 0.26 | 11 | 0.40 | 88 | 82.90 | 0 | 0.00 | 41 | 11.09 | 4 | 0.03 |
| Սյունիք | 2 | 0.26 | 2 | 3.59 | 12 | 4.11 | 8 | 0.36 | 52 | 66.39 | 2 | 0.05 | 26 | 2.44 | 3 | 0.24 |
| Վայոց ձոր | 29 | 37.77 | 1 | 0.04 | 6 | 0.21 | 4 | 0.01 | 151 | 74.86 | 0 | 0.00 | 15 | 1.57 | 3 | 0.21 |
| Տավուշ | 23 | 10.79 | 2 | 0.31 | 16 | 0.72 | 24 | 1.09 | 46 | 14.27 | 0 | 0.00 | 23 | 2.37 | 6 | 1.29 |
| Ընդամենը | 219 | 206.59 | 22 | 9.26 | 254 | 17.14 | 212 | 11.21 | 2479 | 1931.91 | 16 | 6.48 | 757 | 73.23 | 147 | 15.94 |

Ստորև ներկայացված է 2015 թվականի երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

| | Ուղղակի վաճառք | | | | | | | | Վաճառք աճուրդով | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | Արդյունա-բերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Ընդամենը | | Գյուղ. նշանա-կության հողեր | | Գյուղ. նշանա-կության հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր | | հասարակա-կան կառուցապ. հողեր | | | | | | | | բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր | | հասարակա-կան կառուցապ. հողեր | |
| | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) | Միավոր | Մակերես (հա) |
| Երևան | 54 | 1.26 | 1 | 0.01 | 25 | 0.77 | 28 | 0.48 | 23 | 2.16 | 0 | 0.00 | 2 | 1.67 | 2 | 0.14 | 19 | 0.35 |
| Արագածոտն | 3 | 0.03 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 3 | 0.03 | 38 | 22.49 | 28 | 21.99 | 2 | 0.11 | 3 | 0.04 | 5 | 0.35 |
| Արարատ | 4 | 0.015 | 0 | 0.00 | 2 | 0.01 | 2 | 0.005 | 88 | 61.23 | 36 | 58.04 | 4 | 0.29 | 36 | 2.54 | 12 | 0.36 |
| Արմավիր | 5 | 0.12 | 1 | 0.03 | 1 | 0.04 | 3 | 0.05 | 16 | 6.884 | 8 | 6.57 | 0 | 0.00 | 1 | 0.004 | 7 | 0.31 |
| Գեղարքունիք | 3 | 0.122 | 0 | 0.00 | 2 | 0.12 | 1 | 0.002 | 64 | 9.86 | 16 | 5.06 | 1 | 0.10 | 33 | 2.59 | 14 | 2.11 |
| Լոռի | 13 | 0.96 | 0 | 0.00 | 3 | 0.02 | 10 | 0.94 | 42 | 3.71 | 6 | 1.05 | 0 | 0.00 | 12 | 0.24 | 24 | 2.42 |
| Կոտայք | 13 | 0.332 | 1 | 0.002 | 10 | 0.30 | 2 | 0.03 | 175 | 64.45 | 58 | 55.36 | 3 | 2.12 | 79 | 5.03 | 35 | 1.94 |
| Շիրակ | 6 | 0.07 | 0 | 0.00 | 4 | 0.03 | 2 | 0.04 | 19 | 6.85 | 1 | 5.27 | 2 | 0.98 | 7 | 0.24 | 9 | 0.36 |
| Սյունիք | 6 | 0.03 | 0 | 0.00 | 6 | 0.03 | 0 | 0.00 | 17 | 8.26 | 1 | 0.24 | 2 | 3.59 | 6 | 4.07 | 8 | 0.36 |
| Վայոց ձոր | 2 | 0.003 | 0 | 0.00 | 1 | 0.001 | 1 | 0.002 | 38 | 38.025 | 29 | 37.77 | 1 | 0.04 | 5 | 0.21 | 3 | 0.005 |
| Տավուշ | 5 | 0.22 | 0 | 0.00 | 3 | 0.09 | 2 | 0.13 | 59 | 12.65 | 22 | 10.75 | 2 | 0.31 | 13 | 0.63 | 22 | 0.96 |
| Ընդամենը | 114 | 3.16 | 3 | 0.04 | 57 | 1.41 | 54 | 1.71 | 579 | 236.57 | 205 | 202.10 | 19 | 9.21 | 197 | 15.73 | 158 | 9.53 |

2015 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 14 գործարք (4.51 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2015 թվականի երկրորդ եռամսյակում, 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 16.8 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 52.1 %-ով, իսկ մարզերում՝ 14.2 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 21.3 %-ով, բնակելի կառուցապաման (տնամերձ) հողերի նկատմամբ նվազել է 30.1 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 25.5 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 34.5 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2015 թվականի երկրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակ | Մակերես (հա) | պայմանագրային գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | | Միավորների քանակ | Մակերես (հա) | շուկայական գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | |
| | | | Նվազագույն | Առավելա-գույն | Միջին | | | Նվազագույն | Առավելա-գույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 27 | 21.49 | 72.1 | 1400.0 | 717.6 | 126 | 120.28 | 365.0 | 12000.0 | 3725.6 |
| Ապարան | | | | | | 1 | 0.56 | 86.5 | 2727.3 | 652.0 |
| Թալին | | | | | | 31 | 26.82 | 93.6 | 5494.5 | 788.5 |
| Ծաղկահովիտ | 1 | 0.50 | 72.5 | 72.5 | 72.5 | 14 | 32.78 | 79.5 | 1000.0 | 345.9 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 27 | 19.98 | 68.7 | 3346.7 | 1224.6 | 115 | 26.59 | 335.1 | 10833.3 | 2602.0 |
| Մասիս | 1 | 0.74 | 1012.7 | 1012.7 | 1012.7 | 19 | 15.30 | 200.0 | 11904.8 | 3101.9 |
| Վեդի | 8 | 37.31 | 58.6 | 3080.3 | 298.4 | 89 | 169.77 | 207.0 | 10795.1 | 1796.8 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 4 | 4.44 | 63.7 | 77.8 | 70.5 | 112 | 68.87 | 294.3 | 9090.0 | 1224.2 |
| Բաղրամյան | 1 | 1.30 | 67.5 | 67.5 | 67.5 | 34 | 269.68 | 90.6 | 2561.1 | 890.5 |
| Վաղարշապատ | 3 | 0.82 | 1000.0 | 1245.3 | 1098.4 | 114 | 61.80 | 444.4 | 11764.7 | 1926.6 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 22 | 7.25 | 199.8 | 1875.0 | 461.1 |
| Ճամբարակ | 1 | 0.12 | 1811.7 | 1811.7 | 1811.7 | | | 60.5 | 953.3 | 352.0 |
| Մարտունի | 10 | 1.61 | 132.0 | 2257.7 | 618.6 | 24 | 3.83 | 51.1 | 2850.0 | 803.5 |
| Սևան | 5 | 3.33 | 172.5 | 719.4 | 448.8 | 35 | 13.83 | 52.2 | 2134.8 | 341.7 |
| Վարդենիս | | | | | | 26 | 58.55 | 41.2 | 2575.1 | 418.5 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 3 | 0.41 | 167.2 | 1233.2 | 698.8 | 288 | 65.13 | 170.4 | 6424.2 | 603.3 |
| Գուգարք | 2 | 0.18 | 1241.1 | 1380.9 | 1311.0 | 44 | 16.16 | 234.6 | 6065.9 | 782.6 |
| Սպիտակ | | | | | | 18 | 5.80 | 250.0 | 5555.5 | 698.8 |
| Ստեփանավան | | | | | | 14 | 11.26 | 90.6 | 1686.6 | 385.7 |
| Տաշիր | 1 | 0.46 | 511.3 | 511.3 | 511.3 | 708 | 495.99 | 45.3 | 1384.4 | 180.0 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 19 | 8.36 | 97.4 | 3669.2 | 1666.1 | 95 | 46.92 | 279.3 | 11942.7 | 4033.2 |
| Եղվարդ | 30 | 38.30 | 78.2 | 2212.6 | 559.3 | 122 | 77.64 | 174.4 | 11971.8 | 2427.6 |
| Հրազդան | 9 | 8.70 | 85.5 | 1191.0 | 748.6 | 44 | 30.35 | 130.5 | 10256.4 | 1153.3 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | | | | | | 40 | 28.58 | 252.0 | 1693.1 | 624.5 |
| Ամասիա | | | | | | 5 | 8.97 | 40.9 | 261.0 | 131.3 |
| Անի | 1 | 5.27 | 103.7 | 103.7 | 103.7 | 24 | 30.20 | 110.6 | 546.9 | 456.8 |
| Աշոցք | | | | | | 1 | 2.65 | 58.5 | 215.8 | 137.2 |
| Արթիկ | | | | | | 18 | 12.51 | 79.4 | 1428.6 | 498.7 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 21 | 25.98 | 92.6 | 1023.2 | 792.4 |
| Կապան | | | | | | 3 | 7.25 | 120.0 | 841.6 | 400.0 |
| Մեղրի | 1 | 0.24 | 360.5 | 360.5 | 360.5 | 1 | 0.53 | 193.0 | 3000.0 | 750.5 |
| Սիսիան | | | | | | 26 | 31.14 | 46.3 | 1977.4 | 597.7 |
| Վայոց ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 11 | 12.26 | 75.1 | 755.7 | 193.0 | 15 | 2.87 | 125.0 | 10000.0 | 1850.0 |
| Վայք | 18 | 25.51 | 72.0 | 13239.1 | 2343.6 | 136 | 71.99 | 58.8 | 1430.7 | 606.9 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | 1 | 0.70 | 235.7 | 235.7 | 235.7 | 21 | 2.71 | 213.3 | 3783.8 | 671.7 |
| Իջևան | 17 | 8.78 | 140.7 | 1884.5 | 801.4 | 11 | 2.86 | 267.5 | 9454.5 | 1386.7 |
| Նոյեմբերյան | 4 | 1.28 | 723.3 | 2922.7 | 1822.4 | 13 | 8.25 | 46.7 | 7368.4 | 977.3 |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2015 թվականի երկրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ$^2$ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակ | Մակերես (մ$^2$) | պայմանագրային գներ՝ 1000.0 մ$^2$ մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | | Միավորների քանակ | Մակերես (մ$^2$) | շուկայական գներ՝ 1000.0 մ$^2$ մակերեսի հաշվարկով (հազար դրամ) | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 3 | 437.5 | 4825.9 | 5000.0 | 4942.0 | 43 | 37664.6 | 130.7 | 22200.0 | 2586.4 |
| Ապարան | | | | | | 3 | 3040.0 | 124.1 | 609.6 | 389.8 |
| Թալին | | | | | | 4 | 4790.0 | 63.2 | 1454.8 | 152.6 |
| Ծաղկահովիտ | | | | | | | | 60.0 | 214.3 | 93.0 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 14 | 13266.2 | 346.2 | 687.5 | 476.4 | 27 | 25143.5 | 173.9 | 7140.3 | 904.7 |
| Մասիս | 20 | 11432.5 | 1970.3 | 4440.0 | 2822.5 | 50 | 40594.2 | 187.5 | 25000.0 | 1209.3 |
| Վեդի | 2 | 662.6 | 1300.0 | 2250.0 | 1775.0 | 23 | 20751.7 | 126.1 | 5000.0 | 663.8 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 1 | 42.0 | 2940.0 | 2940.0 | 2940.0 | 48 | 48946.0 | 131.6 | 9090.9 | 1214.2 |
| Բաղրամյան | | | | | | 3 | 2650.0 | 100.0 | 833.3 | 240.0 |
| Վաղարշապատ | | | | | | 85 | 76877.5 | 197.4 | 26528.4 | 1530.4 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 7 | 8318.0 | 186.6 | 1084.3 | 683.7 |
| Ճամբարակ | 3 | 122.5 | 312.5 | 384.8 | 360.0 | 3 | 3400.0 | 71.3 | 2286.2 | 146.8 |
| Մարտունի | 21 | 25002.0 | 188.1 | 833.3 | 389.7 | 22 | 26339.0 | 119.3 | 5000.0 | 280.9 |
| Սևան | | | | | | 3 | 3857.0 | 240.0 | 3110.4 | 333.3 |
| Վարդենիս | 9 | 752.0 | 600.0 | 600.0 | 600.0 | 3 | 4662.1 | 72.5 | 987.2 | 150.2 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 4 | 555.7 | 385.0 | 1650.0 | 1439.2 | 2 | 1541.5 | 114.3 | 1388.9 | 217.3 |
| Գուգարք | 6 | 1678.8 | 258.0 | 2297.3 | 1959.2 | 7 | 3885.4 | 77.9 | 14083.3 | 1260.4 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սպիտակ | | | | | | 2 | 1500.0 | 104.9 | 1348.3 | 207.6 |
| Ստեփանավան | | | | | | 4 | 4688.0 | 88.2 | 1666.7 | 176.0 |
| Տաշիր | 2 | 214.7 | 297.0 | 300.0 | 298.3 | 1 | 94.0 | 45.3 | 400.0 | 90.0 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 69 | 44810.2 | 640.0 | 5647.9 | 2744.7 | 127 | 101923.8 | 264.5 | 35353.5 | 1986.8 |
| Եղվարդ | 10 | 5489.7 | 232.0 | 3234.9 | 2411.5 | 67 | 62077.7 | 173.6 | 27000.0 | 2861.7 |
| Հրազդան | | | | | | 13 | 10861.0 | 117.7 | 34848.5 | 1318.1 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 6 | 2050.9 | 174.2 | 10482.5 | 4852.7 | 21 | 91107.5 | 113.6 | 18750.0 | 335.1 |
| Ամասիա | | | | | | | | 45.3 | 274.7 | 72.0 |
| Անի | | | | | | 3 | 4187.2 | 67.9 | 180.6 | 196.0 |
| Աշոցք | | | | | | | | 40.8 | 144.0 | 65.0 |
| Արթիկ | 1 | 300.0 | 300.0 | 300.0 | 300.0 | 16 | 15626.8 | 111.8 | 5000.0 | 218.3 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 8 | 8693.0 | 112.2 | 1700.0 | 365.8 |
| Կապան | 4 | 39794.6 | 115.2 | 1105.3 | 578.3 | 5 | 4855.0 | 67.9 | 2638.9 | 343.0 |
| Մեղրի | 2 | 954.0 | 305.9 | 1081.8 | 693.9 | 10 | 7993.9 | 68.5 | 632.9 | 250.0 |
| Սիսիան | | | | | | 3 | 2820.0 | 123.5 | 875.0 | 234.8 |
| Վայոց ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 3 | 1200.0 | 1031.3 | 1038.8 | 1035.5 | 12 | 12284.8 | 96.7 | 7659.6 | 508.4 |
| Վայք | 2 | 882.0 | 851.6 | 1312.5 | 1082.1 | 3 | 3419.0 | 120.7 | 1448.3 | 246.0 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 1 | 364.7 | 75.8 | 810.0 | 125.3 |
| Իջևան | 9 | 4823.3 | 255.9 | 3000.0 | 2280.7 | 19 | 18935.2 | 74.1 | 14423.1 | 526.1 |
| Նոյեմբերյան | 4 | 1499.1 | 250.0 | 900.0 | 399.3 | 2 | 3142.1 | 125.0 | 1948.1 | 246.5 |

2015 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1909 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.0 %-ը:

2015 թվականի երկրորդ եռամսյակում, 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 22.0 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 4.6 %-ով:

2015 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 109 բնակարանի, 136 անհատական բնակելի տան, 930 հասարակական նշանակության, 204 արտադրական նշանակության օբյեկտի, 489 միավոր հողի, 39 ավտոտնակի և 2 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2015 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 21 վարձակալության գործարքի քանակը, 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ, աճել է 61.5 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 16.0 %-ով:

2015 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 1831.38 հա հողից 0.88 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 1830.50 հա հողից 855.54 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 11.45 հա արդյունաբերական օբյեկտի, 945.59 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտի հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 1075.61 հա, որից 129.60 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4429 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.4 %-ը:

Գրավադրման գործարքից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ, աճել է 48.4 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 33.5 %-ով: Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (50.6 %), անհատական բնակելի տների (23.0 %), հասարակական նշանակության օբյեկտների (11.1 %) և հողերի (9.7 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2466 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ, աճել է 43.5 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 34.1 %-ով:

2015 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել է 1552.00 հա հող, որից 52.68 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 95.4 %-ը կամ 1480.35 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.54 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Արմավիրի մարզում՝ 1261.02 հա, որից 1260.74 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 386 գործարք, որից 283-ը՝ Երևանում: 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 73.1 %-ով, ընդ որում Երևանում՝ 72.6 %-ով, մարզերում՝ 74.6 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել է 37.1 %-ով, ընդ որում Երևանում՝ 30.0 %-ով, մարզերում՝ 51.0 %-ով:

2015 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 6063 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որի քանակը, 2015 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 41.0 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 4.6 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 12.8 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (28.8 %):

**ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**